

Կ Ա Ր Ծ Ի Ք

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ԱՐՄԻՆԵ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ներկայացված «Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենը (ըստ Արարատյան դաշտի Ակնաշեն և Առատաշեն բնակատեղիների նյութերի)» խորագրով ատենախոսության վերաբերյալ

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցող՝ հնագետ, Արմինե Արամայիսի Հարությունյանի «Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենը (ըստ Արարատյան դաշտի Ակնաշեն և Առատաշեն բնակատեղիների նյութերի)» խորագրով ատենախոսության թեման նվիրված է Հայաստանի հնագիտության առավել ուշագրավ և ներկայումս պարբերաբար ուսումնասիրվող ժամանակահատվածի՝ նեոլիթի և էնեոլիթի վաղ փուլի խեցեղենի ուսումնասիրությանը: Աշխատանքի և՛ ընդգրկած պարբերաշրջանը, և՛ ներկայացված նյութերի հարուստ հավաքածուն, և՛ իրականացված աշխատանքների ծավալն ու մեթոդաբանությունը շատ կարևոր դեր ու նշանակություն ունեն ինչպես Հայաստանի, այնպես և ողջ տարածաշրջանի մ.թ.ա. VI-IV հազ. արտադրատնտեսական ու սոցիալական գործընթացների, ինչպես նաև մշակութային փոխառնչությունների վերհանման, ուսումնասիրման ու մեկնաբանման համար: Առավել ևս, որ խոսքը վերաբերում է Հայաստանում, Հարավային Կովկասում և, ընդհանրապես Հին Մերձավոր Արևելքում կավի յուրացման ու խեցեգործության սկզբնավորման փուլերին ու խնդիրներին: Սա հեղինակի գիտագործնական և գիտահետազոտական տևական աշխատանքի արդյունքն է, որում տեղ են գտել բազմաթիվ նոր, տակավին չիրատարակված և, ըստ էության, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ ներառվող փաստացի նյութեր, դատողություններ, հիմնավորումներ ու մեկնաբանություններ:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, չորս գլուխներից (որոնցից յուրաքանչյուրն ունեն իրենց ենթագլուխները), վերջաբանից, օգտագործած գրականության և լուսանկարների աղյուսակների ցանկերից, բուն

աղյուսակներից և ծավալուն դիագրամներից, ինչպես նաև 4 հավելվածներից: Տեքստի շարադրանքը կազմում է A4 ֆորմատի 282 համակարգչային էջ:

Ատենախոսության առաջին գլուխը (էջ 12-31) կրում է «Խեցեղենի հետազոտման մեթոդները. սույն հետազոտության փորձարարությունը (պրակտիկան)» խորագիրը: Նրանում ներկայացված են խեղեղենի ու ընդհանրապես խեցեգործության հանդես գալու պատմությունն ու դրա վերաբերյալ գիտական ու փորձագիտական ուսումնասիրությունների պատմագրությունը: Այս առումով, ատենախոսության հեղինակն անդրադարձել է Վ. Գորոդցովի, Մ. Վոյեվոդսկու, Ե. Պեշերևայի, Ն. Գրաժդանկինայի, Մ. Գրյազնովի, Է. Սայկոյի, Ա. Բոբրինսկու, Վ. Գենինգի, Ա. Շեպարդի, Ք. Օրթոնի, Մ. Հյուզի, Ֆ. Մաթսոնի, Մ. Ռայզի և այլոց հիմնարար աշխատանքներին և վերջիններիս տեղեկատվությունները, փորձն ու արդյունքերն ի մի բերելով, սեփական դիտարկումների հիման վրա ներկայացրել իր գիտագործնական աշխատանքի տեսլականը: Հենց վերջիններիս էլ հանրագումարի բերելով՝ հեղինակն այս գլխի երկրորդ, երրորդ և չորրորդ ենթագլուխներում անդրադարձել է խեցեղենի տեսադիտարկմամբ բնորոշման, պետրոգրաֆիական անալիզի, քիմիական և ռենտգենաչափական հետազոտման մեթոդներին: Հատկանշական է և շատ կարևոր, որ նշված գլխի վերջում Ա. Հարությունյանն անդրադարձել է հնագիտության մեջ առավել կարևոր և առաջնային խնդիրներից մեկին՝ Հայաստանի (մասնավորապես Ակնաշենի ու Առատաշենի) նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենի տիպաբանությանն ու դասակարգմանը: Աշխատանք, որի հնարավորինս հավաստի իրականացումը ոլորտի փորձված մասնագետին ի զորու ձեռնարկում է: Ինչն, ի պատիվ ատենախոսի, արվել է ամենայն մանրամասնությամբ և փաստացի ու միանգամայն արժանահավատ հիմնավորումներով:

Ատենախոսության երկրորդ գլուխը (էջ 32-56) կրում է «Ուսումնասիրության աղբյուրագիտական բազան. Արարատյան դաշտի նեոլիթ-էնեոլիթյան հնավայրերը» վերնագիրը: Այստեղ ատենախոսն անդրադարձել է Արարատյան դաշտում նեոլիթ-էնեոլիթյան ժամանակաշրջանում

կենսատարածքի կազմակերպման ու բնակավայրի ձևավորման խնդիրներին, տեղի վաղերկրագործական հասարակությունների տնտեսվարման եղանակներին ու դրանց առանձնահատկություններին, Առատաշեն և Ակնաշեն բնակավայրերի շերտագրության, տարբեր հորիզոններից հայտնաբերված տարաբնույթ արտեֆակտների ժամանակագրության հարցերին: Հատկանշական է, որ վերոնշյալ հնավայրերիում իրականացված դաշտային աշխատանքների ու գիտագործնական հետազոտությունների արդյունքները ներկայացվել են ինչպես հարակից տարածքների (Մասիս բլուր, Ադաբլուր, Ծաղկունք, Մեծամոր և այլն), այնպես էլ Հարավային Անդրկովկասի (Շուլավերիս-գորա, Իմիրիս-գորա, Գադաչրիլի-գորա, Դենգրեուլի-գորա, Արուխլո, Խրամիս Դիդի-գորա, Շոմութեփե, Թոյրեթեփե, Գարգալարեփեփեի, Գյոյթեփե, Մենթեշթեփե և այլն), Վանի ու Եփրատի ավազանների (Թիլկիթեփե, Թեփեշիք, Քորոջութեփե, Թյուլինթեփե և այլն) համաժամանակյա հուշարձաններից հայտնաբերված նյութական մշակույթի փաստացի մնացորդների համեմատությամբ:

Ատենախոսության երրորդ գլուխը (էջ 57-83) «Խեցեղենի տեխնիկատեխնոլոգիական բնութագրումը» վերնագիրն է կրում: Այստեղ հեղինակը նախապես ներկայացնում է քննարկվող ուղղությամբ կատարված աշխատանքի ընդհանուր մեթոդաբանության ներկա վիճակը և առանձին-առանձին անդրադառնում նախընտրելի մեթոդներով իրականացված հետազոտությունների վերջնական արդյունքներին: Մասնավորապես այս գլխի ենթագլուխներից մեկը վերաբերում է Ակնաշեն և Առատաշեն հնավայրերի միներալային խառնուկներ պարունակող խեցատների խմբի (GTW I) ուսումնասիրությանը, այդ խմբի բնութագրմանը և պետրոգրաֆիական նակարագրությանը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ քննարկվող խմբի նյութերի թրծման աստիճանը տատնվում է 600-750°C սահմաններում, իսկ կավի զանգվածը հանդես է բերում բարձր փխրունություն: Նույն գլխի հաջորդ ենթագլխում քննարկվել են Ակնաշենի և Առատաշենի նեոլիթ-էթնոլիթյան խեցեղենի այն խումբը (ChTW), որի կավի զանգվածի բաղադրության մեջ առկա

են օրգանական խառնուկներ կամ հավելումներ: Տրվել է այդ խումբը կազմող օրինակների ընդհանուր բնութագիրը և պետրոգրաֆիական մանրամասը նկարագիրը:

Երրորդ գլխի հաջորդ ենթագլուխը վերաբերում է Ականջեն և Առատաշեն հնավայրերի պեղումներից հայտնաբերված խեցեղենի այն խմբին (OTW), որ բաղադրության մեջ առկա են վանակատի մանրացրած կտորների և/կամ ավազի հավելումներ: Պետրոգրաֆիական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կավի բաղադրության մեջ վանակատի մինչև 3-4 մմ չափերի փշրանքները կարող են կազմել ամբողջ զանգվածի 14-37% և, երբեմն առանձնառաբեկորների մակերեսներին իրենց սև, փայլուն արտաքինով: Այս եղանակով պատրաստված խեցեղենի թրծման մոտավոր ջերմաստիճանը տատանվում է 600-700°C սահմաններում, իսկ արտադրանքի մակերեսին ձևավորվում են մանր ճեղքեր ու ճաքեր:

Երրորդ գլխի վեցերորդ ենթագլխում քննարկել են Առատաշենի և Ակնաշենի «ներմուծված, գունազարդ և միագույն» խեցեղենի խմբին (PW, MW) վերաբերող խնդիրները: Ըստ որում, պետրոգրաֆիական ուսումնասիրությունները ցույց են տալի, որ դրանց կավի բաղադրության մեջ առկա են և՛ միներալային, և օրգանական խառնուկներ, իսկ թրծման ջերմաստիճանը թերևս հավասար կամ բարձր է եղել 750°C-ից:

Այս գլխի յոթերորդ ենթագլխում բնութագրվել են խեցեգործության համար անհրաժեշտ հումքի ձեռքբերման առավել հավանական աղբյուրները: Ըստ ատենախոսի հաղորդման դրանցից մեկը, թերևս, ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք (նախկին՝ Լենուդի) համայնքի վարչական սահմաններում է, մյուսը՝ ՀՀ Արարատի մարզի Նորաբաց գյուղի տարածքում, երրորդը՝ Փարաքար – Արգավանդ հատվածում:

Ատենախոսության չորրորդ գլուխը կրում է «Տարածաշրջանային համատեքստում Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենի ձևատիպաբանական և վիճակագրական անալիզը» վերնագիրը: Այստեղ Արատաշեն և Ակնաշեն հնավայրերի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենի

ձևատիպաբանական և վիճակագրական անալիզն ու շերտագրական բնութագիրը ներկայացվել է Կուրի ավազանի և ավելի մեծ տարածաշրջանի (Հայկական լեռնաշխարհ, Միջագետք) աշխարհագրական և ժամանակագրական համատեքստում: Քննության են առնվել «տեղական» և «ներմուծված» խեցեղենի տիպաձևաբանական առանձնահատկությունները, ինչը ցույց է տալիս, որ հյուսիսից Տավրոսյան, հարավարևելքից՝ Զագրոսի լեռների և արևմուտքից՝ Միջերկրայքի արևելյան ափամերձ տարածքով սահմանափակված Հյուսիսային Միջագետք հորջորջվող տարածքում մ.թ.ա. VII-VI հազ., ձևավորվում և տարածում են գտնում խեցեգործական արտադրանք ունեցող մշակույթներ (Սամարրա, Թել Հալաֆ), որոնց խեցեղենն աստիճանաբար տարածում է գտնում հարակից տարածքներում: Ըստ որում, Առատաշենի և Ակնաշենի պեղումների արդյունքներն ու դրանց համակողմանի ուսումնասիրությունները փաստում են, որ մ.թ.ա. VII-VI հազ. սահմանագծին այդ խեցեղենը հայտնվում է նաև Արարատյան դաշտի նեոլիթ – էնեոլիթյան հուշարձաններում:

Վերջաբանում համակարգված ձևով ի մի են բերված ատենախոսության ներածության մեջ և 4 գլուխներում ներկայացված և մանրագնին քննարկված երկարամյա հետազոտությունների արդյունքները, մեկնաբանություններն ու հետևությունները:

Անշուշտ կատարվել է հնագիտության այս բարդ և աշխատատար ոլորտին վերաբերող տքնաջան, մանրագնին և արդի հետազոտական մեթոդներին հարիր աշխատանք, որն արժանի է դրվատանքի: Այս առումով անհրաժեշտ ենք համարում մանրամասը նշել այն արժանիքներն ու նորությունը, որ պարունակում է սույն աշխատանքը:

1. Բավական բարդ ու տեխնոլոգիական առումով բազմաթիվ տերմիններ ու արտահայտություններ պարունակող այս աշխատանքը գրված է մասնագիտական ամենաբարձր մակարդակով, գրեթե առանց տեխնիկական սխալների և, միևնույն ժամանակ, շատ մատչելի ու ընկալելի լեզվով:

2. Աշխատանքն իրականացնելիս հեղինակն օգտագործել է ոլորտին վերաբերող և վերջերս հրատարակված տասնյակ մասնագիտական հրատարակություններ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներով, որոնք առավել ընդգրկուն, խորն ու հիմնավոր են դարձնում իրականացված աշխատանքը: Ինչ վերաբերում է օգտագործած գրականության ընդհանուր քանակին, ապա այն շուրջ 250 միավոր է կազմում:

3. Շարադրանքը պարունակում է հնագիտական տվյալների և հնաչափական անալիզների արդյունքների համապարփակ ուսումնասիրության հենքի վրա համակարգված և վերլուծված Հայաստանի (մասնավորապես՝ Առատաշենի և Ակնաշենի) նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենի ինչպես ձևատիպաբանական, այնպես և տեխնիկական ու տեխնոլոգիական տվյալները:

4. Ուսումնասիրվող երևույթի պատմամշակութային համատեքստը վերհանելու նպատակով, մշակութային և ժամանակագրական լայն զուգահեռների հիման վրա հեղինակն իրականացրել է համեմատական կարևոր վերլուծություններ, որ արժանի են դրվատանքի:

5. Աշխատանքի վերջում ներկայացվել են գծանկարների ու լուսանկարների 55 տախտակներ, 14 էջ կազմող աղյուսակներ ու դիագրամներ, ինչպես նաև 61 էջ տեքստային և գրաֆիկական հավելվածներ, որոնք խոսում են ատենախոսի նյութին հիմնավորապես տիրապետելու և վերլուծական բարդ, բայց միևնույն ժամանակ հավաստի մեկնաբանություններ կատարել կարողությունների մասին:

6. Այս առումով ատենախոսության մեջ տեղ են գտել բազմաթիվ մեկնաբանություններ ու եզրահանգումներ, որոնք հնարավորություն են ընձեռում նորովի դիտարկելու Հայաստանի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենին առնչվող արտադրական բազմաթիվ հիմնախնդիրներ:

7. Կցանկանայինք ընդգել նաև Առատաշենի և Ակնաշենի միջազգային հնագիտական արշավախմբերի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Բադալյանի և իրականացված ատենախոսության գիտական ղեկավար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր

Պավել Ավետիսյանի մասնագիտական խորհրդատվության ու աջակցության անուրանալի դերը սույն աշխատանքի բարձր մակարդակով իրականացման գործում:

Միանշանակ շատ բարձր գնահատելով Արմինե Արամայիսի Հարությունյանի կատարած տքնաջան աշխատանքը, մեր հնարավորությունների սահմաններում, կցանկանայինք ներկայացնել նաև մի քանի առաջարկություններ, որոնց դիտարկումն ու հնարավոր կիրառումը, թերևս ավելի շահեկան կդարձնին ատենախոսությունը:

1. Կարծում ենք, որ Ակնաշենի ու Առատաշենի նեոլիթ-էնեոլիթյան խեցեղենին վերաբերող շարադրանքը կլիներ ավելի ամբողջական ու ընդգրկուն, եթե հարավկովկասյան, փոքրասիական, միջագետքյան և իրանական զուգահեռների կողքին, ներկայացված լինեին վերոնշյալ հուշարձանների հարևանությամբ գտնվող Մեծամոր հնավայրի համաժամանակյա նյութերը: Դրանք տեղ են գտել Էմմա Խանզադյանի փոքրաթիվ հրապարակումների ու օրագրային նյութերի հիման վրա 2015 թ. ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտաաշխատողների խմբի կողմից (Ա. Փիլիպոսյան, Լ. Գևորգյան, Ա. Աբգարյան, Ա. Զաքյան) լույս տեսած «Մեծամոր (պատմահնագիտական ակնարկ)» խորագրով գրքում և 2019 թ. հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով հրատարակված «Մեծամոր» գրքույկում (հեղինակներ՝ Ա. Փիլիպոսյան, Բ. Յակուբիակ):

2. Կարծում ենք, որ աշխատանքն ավելի ընդգրկուն կլիներ, եթե նրանում օգտագործված լինեին նաև հետևյալ աշխատանքները.

- **Rana Özbal, Mücella Erdalkiran, Yukiko Tonoike**, *Neolithic pottery from the near east Production, Distribution and Use*, Third International Workshop on Ceramics from the Late Neolithic Near East 7-9 March, 2019 – Antalya PROCEEDINGS, Antalya.

- **A. Gtreily Hansen**, *Early pottery kilns in the Middle East*, “Paléorient”, vol. 26, issue 2, 2000, pp. 69-81.


• **Barton MacDonald**, *The Pottery Neolithic and Chalcolithic Periods*, in: “Wadi el Hasa Archaeological Survey 1979-1983, West-Central Jordan”, Wilfred Laurier University Press 2006, pp. 128-138:

3. Աշխատանքում կան ոչ մեծ թվով համառոտագրություններ, որոնք բացված չեն: Ցանկալի է, որ հետագայում, երբ աշխատանքը կպատրաստվի հրատարակության, ինչն անհրաժեշտ է, նրանում տեղ գտնի նաև «Համառոտագրություններ» հատվածը:

Ուզում ենք ընդգծել, որ արված առաջարկություններն ու նկատառումները զուտ խորհրդատվական բնույթ ունեն և ոչնչով չեն սովերում կամ նսեմացնում կատարված խորը և հիմնարար աշխատանքը: Այն լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ԲԿԳԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին: Ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ ներկայացնում է աշխատանքի ամփոփ և համառոտ շարադրանքը:

Ուստի ատենախոս Արմինե Արամայիսի Հարությունյանը միանգամայն արժանի է հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմ. ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր



Ա. Փիլիպոսյան

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր Աշոտ Փիլիպոսյանի ստորագրությունը հաստատում եմ:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության Ֆակուլտետի դեկան, պատմ. գիտ. թեկնածու



Է. Հովհաննիսյան



06.12.2024 թ.